

ՅՐԸՄ-Ն ԶԱՅՏԱՐԱՐՈՒՄ Ե ԿԱՆԱՆՑ ԶՈՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԿ ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ՝ ՅՐԸՄ «ԿԻՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

- 
- 

Սեպտեմբերի 09 2020

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՅՐԸՄ) շարունակում է հավատարիմ մնալ իր որդեգրած քաղաքականությանը՝ խթանելով երկրում սոցիալ-տնտեսական զարգացումը: Ահա այս նպատակով է, որ ՅՐԸՄ-ն սկսում է կանանց հզորացմանն ուղղված ևս մի ծրագիր: Այս նոր՝ «Կին ծրագրավորողներ» ծրագրի շրջանակներում ՅՐԸՄ-ն Հայաստանի կանանց համար կկազմակերպի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի անվճար դասընթացներ՝ հնարավորություն ընձեռելով աշխատանք գտնել երկրում արագ զարգացող, հաջողակ և լավ վարձատրվող աշխատաշուկայում:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ **յոթ** բաղադրիչներից.

1. **Դասընթաց.** դասընթացները կտևեն մինչև հինգ ամիս՝ կախված մասնագիտությունից:

Մասնակիցը կարող է դիմել առաջարկվող մասնագիտություններից միայն մեկին՝

- **SS** նախագծերի կառավարում (IT Project Management). սույն մասնագետները պատասխանատու են SS նախագծի պլանավորման, կազմակերպման, բյուջետավորման, վերահսկման և ծրագրի հաջողակ իրականացման համար: Նրանք պետք է ունենան անգլերենի որոշակի իմացություն, մարդկանց հետ շփվելու և հաղորդակցվելու կարողություն և ցանկություն, ինչպես նաև կազմակերպչական հմտություններ: Ցանկալի է, որպեսզի այս դասընթացի դիմորդներն ունենան որոշակի աշխատանքային փորձ, սակայն այն կարող է լինել նաև այլ ոլորտներում, քանի որ ծրագիրը սկսնակների համար է նախատեսված:
- Որակի ապահովում (Quality Assurance). SS կազմակերպության կառուցվածքում պատասխանատու օղակներից մեկն է, որն իր գործունեությամբ ստեղծվող պրոդուկտի համար ներդրում և գործարկում է հիմնավորված ստուգման մեխանիզմներ՝ արված աշխատանքի որակը ստուգելու համար: Թեստավորվում են պրոդուկտի ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ հատկությունները: Այս դասընթացի դիմորդները պետք է օժտված լինեն տրամաբանությամբ, համբերությամբ, ունենան սուր աչք և սխալները շուտ տեսնելու հատկություն:
- Ռեակտ ՋեյԷս (React JS). հայաստանյան աշխատաշուկայում ամենապահանջված ծրագրավորման լեզուներից մեկն է: Այս դասընթացին մասնակցելու համար խրախուսվում է մաթեմատիկայի հմտություններ, տրամաբանական խնդիրների լուծման ունակություններ, անգլերենի որոշակի իմացություն, իսկ Ջավա Սկրիպտի գիտելիքները ցանկալի են, բայց ոչ պարտադիր:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. հնարավոր է՝ մասնակիցը ցանկություն հայտնի սովորել առաջարկվող դասընթացներից մեկում, սակայն թեստի արդյունքները և/կամ հարցազրույցը ցույց տան, որ նա համապատասխանում է մեկ այլ դասընթացի համար, խորհրդակցության և համաձայնության դեպքում, մասնակիցը կարող է տեղափոխվել այլ դասընթացի խումբ:

2. **Փորձագետների հետ խորհրդատվություն.** մասնակիցներին հնարավորություն կընձեռվի մասնագիտական խորհրդատվություններ ստանալ սփյուռքի մեր լավագույն փորձագետների կողմից և կապեր հաստատել նրանց հետ:

3. **Փափուկ հմտությունների (Soft skills) զարգացում.** մասնակիցները կօգտվեն ՅՐԸՄ-ի պատրաստած կարճ դասընթացներից, ինչպիսիք են, օրինակ՝ գործնական էթիկա, քննադատական մտքի ձևավորում, ֆինանսական գրագիտություն, ինքնավստահության ձեռքբերում, ներկայացման հմտություններ և այլն:

4. **Վկայական.** ավարտական քննությունները հաջող հանձնած մասնակիցները կստանան հավատարմագրված վկայականներ:

5. **Կրթաթոշակներ.** վեց լավագույններին կտրվեն կրթաթոշակներ՝ հետագա կրթական առաջընթացը խրախուսելու նպատակով:
6. **Փորձաշրջան.** կրթական փուլի ավարտից հետո մասնակիցները փորձաշրջան կանցնեն Հայաստանի լավագույն SS կազմակերպություններում: Փորձաշրջանը կտևի մինչև վեց ամիս, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան ամրապնդել ձեռք բերած գիտելիքները, իսկ իրենց փայլուն դրսևորելու դեպքում՝ աշխատանքի անցնել նույն կազմակերպություններում:
7. **ՅԲԸՄ-ի շրջանավարտների ցանց.** ՅԲԸՄ-ի «Կին ծրագրավորողներ» ծրագրի մասնակիցները կդառնան ՅԲԸՄ-ի մյուս ծրագրերի շրջանավարտների ցանցի մի մասը: Այս ցանցը հնարավորություններ է ստեղծում մասնակցել տեղական և միջազգային բարձրակարգ մասնագետների կողմից կազմակերպվող աշխատանքային խմբերին, սեմինարներին և ավելի զարգացնել սեփական հմտությունները:
Դիմել կարող են 18 տարին լրացած կանայք, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Ընդունելությունը բաց է մինչև **սեպտեմբերի 30-ը** ներառյալ: Տեղերը սահմանափակ են: Ընդունելությունը բաղկացած է երեք փուլից՝ դիմումի բովանդակություն, թեստավորում և հարցազրույց: Դիմում-հայտը լրացնելու համար այցելե՛ք **[այստեղ](#)**:
Հետադարձ կապ՝ +374 (0) 60 62 22 16 կամ **womencoders@agbu.am**: